ծության արևելյան պատին, մի խաչաքանդակ, խաբբսխից դեպի վեր բարձրացող սովորական արմավենիկների փոխարեն՝ իրար հանդեպ կանգնած մի մի աղավնի. նման մոտիվ կրկնվում է մանրանկարչական արվեստի և քանդակագործության մեջ, որինակ, Դսեղի Բարձրաքաշ Ս. Գրիգորում։ Խաչի տակը հյուսվածքի մի գեղեցիկ զարդարանք է, իսկ կողերից և ճակատից վորպես շրջանակ նույնպես զարդարված (պատկ. 40). խաչի մեծությունն է 1,87×1,02մ.։

Ափսիդի աջ կողմից ևս, արևելյան պատին՝ քանդակված է ճիպոտաձևերից կազմված մի խաչ, կեդրոնականից զատ, թևերն ել խաչով։ Խաչը բարձրանում է յեռաստիճան պատվանդանի վերա, պատվանդանի մակերևույթը հիսկեն զարդով, կեդրոնում Ադամի գլուխը։ Խաչի յերկու կողմից կանգնած են մի մի մարդ, աջ կողմինը մի ձեռքում նիզակ, մյուսում դուրզ (?), ձախինը մի ձեռքին նիզակ, մյուսով պատերազմական փողը բերանին դրած։ Խաչաքանդակի մեծությունն է 2,58×1,35 մ. (պատկ. 41)։ Կողքին, խաչի ձախ կողմից, նկատվում է քառանկյունու մեջ մի հյուսկեն զարդ, վերևը, քառանկյունուց դուրս՝ մարդու գլուխ. ինձ համար անհասկանալի, յեթե կիսավարտ չե գործը. մեծությունը է 70×60 սմ.։

Տաճարի հյուսիսային պատից մի դուռ տանում է դեպի փոքրիկ ավանդատունը վեմքարով. դրան լայնքը 0,73 մ. է, բարձրությունը 2,2մետր. դրան ճակատը զարդարված է յելնդավոր, գծական, գեղեցիկ հյուսվածքով, գծերի ծայրերը վարդյակից դուրս յեռատերևով վերջացած, կողքի տերևները նշատերևի նման։ Դրան շրջանակի վերին անկյունում մի մի ոյոշի բացված (պատկ. 42) ծաղիկ, արվեստի սիրելի մոտիվներից մեկը։ Ավելի բարձր, այս դրան շրջանակից վեր, մի բոլորակ, մեծ վարդյակ, հյուսվածք (պատկ. 43)։

Տաճարի մուտքի մոտ, ձախ հեռին դասում, պատերի վերա փորագրված են յելնդավոր խաչեր, մոտն այսպիսի արձանագրությամբ. «սբ խաչս կոչի բարեխաւս տր Մանուէլ եպկի»։

Բացի գմբեթի յերդիկից, մի լուսամուտ ել հարավային պատից բացվում է դեպի սրբատաշ քարով շինած կաթուղիկե տաճարը։

Տաճարի մեծությունը արևմտյան պատից մինչև բեմը 5,05 մ., ափսիդի խորությունը 3,38 մ., բացվածքը 3,2 մետր. հարավից հյուսիս, տաճարի լայնքը 6,68 մետր։

Յերկրորդ վիմափորի դուռն առանձին է, բայց դարձյալ մեծ տաճարի սյունազարդ գավթի հյուսիսային պատից, ավելի արևմուտք, քան նախընթաց վիմափորների դուռը։ Այս վիմափոր ժամատան գմբեթը բարձրանում է ութ վորմահեց կիսասյուների վերա, վորոնց կամարները գոթականի նման խաչաձև կտրում են իրար, անկյուններում չորս փոքր ափսիդանման խորշեր կազմելով (տ. պատկ. 44)։ Բացի այս չորս խո-



Պռոշի վիմափոր տաճարի գրեթը ներսից. **Պատկեր 37—38.**